


[161816]



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՇԽԱՏԱՆՔԻ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՀԱՐՑԵՐԻ
ՆԱԽԱՐԱՐ**

Հ Ր Ա Մ Ա Ն

«20» հունվար 2016թ.

N 8 - Ա/1

**ՏԱՐԵՑ ԵՎ (ԿԱՄ) ՀԱՇՄԱՆԴԱՄՈՒԹՅՈՒՆ ՈՒՆԵՑՈՂ ԱՆՁԱՆՑ ԽՆԱՄՔ
ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ԿԱՄ ԽՆԱՄՔԻ ՏՐԱՄԱԴՐՈՒՄԸ ՄԵՐԺԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ
ՈՐՈՇՄԱՆ ԵՎ ԽՆԱՄՔԻ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ ՈՒՂԵԳՐԵՐԻ ՁԵՎԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ,
«Հ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՀԱՐՑԵՐԻ ՆԱԽԱՐԱՐԻ 2014 ԹՎԱԿԱՆԻ
ՀՈՒՆՎԱՐԻ 14-Ի N 3-Ա/1 ՀՐԱՄԱՆԸ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱԶԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 72-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի <<բ>> ենթակետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2002 թվականի նոյեմբերի 14-ի N1821-Ն որոշմամբ հաստատված Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության կանոնադրության 12-րդ կետի «դ» ենթակետով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի սեպտեմբերի 25-ի N 1112-Ն որոշման N 2 հավելվածի 19-րդ և 23-րդ կետերը՝ նպատակ ունենալով կանոնակարգել տարեց և (կամ) հաշմանդամություն ունեցող անձանց խնամք տրամադրելու հետ կապված գործավարության իրականացման գործընթացը և միասնական ձևաչափով փաստաթղթեր կազմելու անհրաժեշտությունը.

Հ Ր Ա Մ Ա Յ ՈՒ Մ Ե Մ՝

1. Հաստատել տարեց և (կամ) հաշմանդամություն ունեցող անձանց՝
 - 1) խնամք տրամադրելու մասին որոշման ձևը՝ համաձայն N 1 հավելվածի.
 - 2) խնամքի տրամադրումը մերժելու մասին որոշման ձևը՝ համաձայն N 2 հավելվածի.

3) բնակչության սոցիալական պաշտպանության ընդհանուր տիպի և հատուկ (մասնագիտացված) հաստատություններում խնամքի տրամադրման ուղեգրի ձևը՝ համաձայն N 3 հավելվածի.

4) տնային պայմաններում խնամքի տրամադրման ուղեգրի ձևը՝ համաձայն N 4 հավելվածի.

5) սոցիալական հոգածության ցերեկային կենտրոնում խնամքի տրամադրման ուղեգրի ձևը՝ համաձայն N 5 հավելվածի:

2. Սահմանել, որ.

1) սկսած 2016 թվականի հուլիսի 1-ից, սոցիալական աջակցության տարածքային գործակալությունը (բաժինը) սույն հրամանով սահմանված որոշումները և ուղեգրերը ձևավորում (տպում) է սոցիալական դեպքի վարման տեղեկատվական համակարգի միջոցով,

2) սույն հրամանով սահմանված որոշումները և ուղեգրերը ձևավորելու համար հիմք են հանդիսանում.

ա. Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի սեպտեմբերի 10-ի N 1061-Ն որոշման Հավելված N 1-ով սահմանված կարգով իրականացված՝ անձի (ընտանիքի) սոցիալական կարիքների գնահատման արդյունքների վերաբերյալ տեղեկատվությունը,

բ. սոցիալական կարիքների գնահատման հիման վրա Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի սեպտեմբերի 10-ի N 1061-Ն որոշման Հավելված N 1-ով սահմանված կարգով վարվող սոցիալական դեպքի վերաբերյալ տեղեկատվությունը (այդ թվում՝ դիմողի անհատական սոցիալական ծրագիրը և դրանում կատարված փոփոխությունները):

3. Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության աշխատակազմի սոցիալական աջակցության վարչության պետ Ա. Մինասյանին, հաշմանդամների և տարեցների հիմնահարցերի վարչության պետ Ա. Կեսոյանին ու Աշխատանքի և սոցիալական հետազոտությունների ազգային ինստիտուտի տնօրեն Ա. Սարգսյանին՝ մինչև 2015 թվականի մարտի 1-ը «Նորք» տեղեկատվավերլուծական կենտրոն» փակ բաժնետիրական ընկերությանը տրամադրել բնակչության սոցիալական պաշտպանության հաստատություն կամ

շուրջօրյա լրիվ խնամք տրամադրող այլ կազմակերպություն ընդունելու մասին դիմում ստանալու դեպքում սոցիալական դեպքի վարման, այդ թվում՝ սոցիալական կարիքի գնահատման, անհատական սոցիալական ծրագրի կազմման մեթոդական ցուցումները, ներառյալ.

1) գնահատման ենթակա կարիքները, կարիքների գնահատման համար կիրառվող չափորոշիչներն ու ցուցանիշները,


2) անհատական սոցիալական ծրագրի կազմն ու բովանդակությունը,

3) սոցիալական դեպքի վարման շրջանակներում կատարվելիք հնարավոր քայլերը, դրանց՝ սոցիալական դեպքի վարման տեսանկյունից հետաքրքրություն ներկայացնող արդյունքները,

4) սոցիալական դեպքի վարման, սոցիալական կարիքների փոփոխությունների ընթացքի (նվազում, խորացում և այլն) գնահատման համար անհրաժեշտ ցուցանիշներն ու ցուցիչները:

4. «Նորք» տեղեկատվավերլուծական կենտրոն» փակ բաժնետիրական ընկերության տնօրեն Կ.Սարգսյանին՝ հիմք ընդունելով սույն հրամանի 3-րդ կետում նշված մեթոդաբանությունը, միջոցներ ձեռնարկել սույն հրամանի 2-րդ կետի 2-րդ ենթակետով սահմանված տեղեկատվությունը սոցիալական դեպքի վարման տեղեկատվական համակարգ մուտքագրելու և, սկսած 2016 թվականի հուլիսի 1-ից, սույն հրամանով սահմանված որոշումները և ուղեգրերը սոցիալական դեպքի վարման տեղեկատվական համակարգի միջոցով ձևավորելը (տպագրելը) ապահովելու ուղղությամբ:

5. Ուժը կորցրած ճանաչել Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարի 2014 թվականի հունվարի 14-ի «Բնակչության սոցիալական պաշտպանության հաստատություն (տուն-ինտերնատ) քաղաքացիների ընդունելության, նրանց սոցիալական ծառայություններ տրամադրելու և դուրսգրման (այդ թվում՝ ժամանակավոր դուրսգրման) կարգը հաստատելու մասին» N 3-Ա/1 հրամանը:



ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱԶԱԿՑՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅՈՒՆ (ԲԱԺԻՆ)

ՈՐՈՇՈՒՄ N

Տարեց և (կամ) հաշմանդամություն ունեցող անձին խնամք տրամադրելու մասին

Հիմք ընդունելով ՍԱՏԳ(Բ)-ի սոցիալական աշխատանքի մասնագետի (դեպք վարողի) տնային այցելության արձանագրությունը և խնամք տրամադրելու վերաբերյալ եզրակացությունը, որոշեցի՝

.....ին, ծնվ.....թ., բնակվող
(ազգանուն, անուն, հայրանուն)

.....հասցեում, անհրաժեշտ է տրամադրել

խնամքի հետևյալ տեսակը՝

(կատարել <<V>> նշում)

- 1. Բնակչության սոցիալական պաշտպանության ընդհանուր տիպի հաստատությունում
- 2. Բնակչության սոցիալական պաշտպանության հատուկ (մասնագիտացված) հաստատությունում
- 3. Տնային պայմաններում
- 4. Սոցիալական հոգածության ցերեկային կենտրոնում

ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱԶԱԿՑՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅԱՆ (ԲԱԺԻՆ) ՊԵՏ

.....
(ստորագրություն, ազգանուն, անուն)

.....20 թ
(լրացման ամսաթիվը)
Կ.Տ.

**ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱԶԱԿՑՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ
ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅՈՒՆ (ԲԱԺԻՆ)**

ՈՐՈՇՈՒՄ N

**Տարեց և (կամ) հաշմանդամություն ունեցող անձին խնամքի տրամադրումը մերժելու
մասին**

Հիմք ընդունելով ՍԱՏԳ(Բ)-ի սոցիալական աշխատանքի մասնագետի (դեպք վարողի) տնային այցելության արձանագրությունը և խնամքի տրամադրումը մերժելու վերաբերյալ եզրակացությունը, որոշեցի

.....ին, ծնվ.....թ., բնակվող
(ազգանուն, անուն, հայրանուն)

.....հասցեում, խնամքի տրամադրումը մերժել

հետևյալ հիմնավորմամբ՝

.....
.....
.....
.....

**ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱԶԱԿՑՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ
ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅԱՆ (ԲԱԺԻՆ) ՊԵՏ**

.....
(ստորագրություն, ազգանուն, անուն)

.....20 թ
(լրացման ամսաթիվը)
Կ.Տ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱԶԱԿՑՈՒԹՅԱՆ _____ **ՏԱՐԱԾՔԱՅԻՆ**
ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅՈՒՆ (ԲԱԺԻՆ)

« _____ » _____ 20__ թ. ՈՒՂԵԳԻՐ N _____

Քաղաքացի _____

(անուն, ազգանուն)

Ուղեգրվում է _____
(բնակչության սոցիալական պաշտպանության հաստատության տեսակը՝ ընդհանուր տիպի և հատուկ (մասնագիտացված) անհրաժեշտ ընդգծել, հաստատության անվանումը)

Քաղաքացու հասցեն _____

Ծննդյան օրը, ամիսը, տարին _____

Սեռը՝ արական / իգական (ընդգծել)

Անձը հաստատող փաստաթուղթ _____

Առդիր՝ _____ թերթ:

Ներկայանալ հաստատություն ուղեգրի տրման օրվանից սկսած 7 օրվա ընթացքում՝ մինչև << _____ >> _____ 20__ թ.

Սոցիալական աջակցության տարածքային գործակալության (բաժնի) պետ՝ _____
(ստորագրություն) (անուն, ազգանուն)

Կ.Տ.

Ինձ տեղեկացվել է հաստատություն ուղեգրման կարգի և ժամկետների մասին. Ուղեգիրն ստանալուց հետո, մինչև << _____ >> _____ 20__ թ. հաստատություն չներկայանալու դեպքում, ես տեղեկացված եմ, որ ուղեգրի ժամկետը լրանալուց հետո 7 օրվա ընթացքում՝ մինչև << _____ >> _____ 20__ թ., այն պետք է վերադարձնեմ ՍԱՏԳ(Բ)՝ գրավոր տեղեկացնելով հաստատություն չգնալու պատճառների մասին, ընդ որում տեղեկացված եմ նաև, որ նշված ժամկետում ՍԱՏԳ(Բ) չներկայանալու և ուղեգիրը սահմանված ժամկետում չվերադարձնելու համար հարգելի պատճառներ չներկայացնելու դեպքում հանվելու եմ հաշվառումից:

Քաղաքացու ստորագրությունը _____ /անուն, ազգանուն/

Կտրոնը տարվում է հաստատություն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱԶԱԿՑՈՒԹՅԱՆ _____ **ՏԱՐԱԾՔԱՅԻՆ**
ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅՈՒՆ (ԲԱԺԻՆ)

« _____ » _____ 20__ թ. ՈՒՂԵԳԻՐ N _____

Քաղաքացի _____

(անուն, ազգանուն)

Ուղեգրվում է _____
(բնակչության սոցիալական պաշտպանության հաստատության տեսակը՝ ընդհանուր տիպի և հատուկ (մասնագիտացված) անհրաժեշտ ընդգծել, հաստատության անվանումը)
Քաղաքացու հասցեն _____

Ծննդյան օրը, ամիսը, տարին _____

Սեռը՝ արական / իգական (ընդգծել)

Անձը հաստատող փաստաթուղթ _____

Առդիր՝ _____ թերթ:

Ներկայանալ հաստատություն ուղեգրի տրման օրվանից սկսած 7 օրվա ընթացքում՝ մինչև << _____ >> _____ 20__ թ.

Սոցիալական աջակցության տարածքային գործակալության (բաժնի) պետ՝ _____
(ստորագրություն) (անուն, ազգանուն)

Կ.Տ.

Ինձ տեղեկացվել է հաստատություն ուղեգրման կարգի և ժամկետների մասին. Ուղեգիրն ստանալուց հետո, մինչև << _____ >> _____ 20__ թ. հաստատություն չներկայանալու դեպքում, ես տեղեկացված եմ, որ ուղեգրի ժամկետը լրանալուց հետո 7 օրվա ընթացքում՝ մինչև << _____ >> _____ 20__ թ., այն պետք է վերադարձնեմ ՍԱՏԳ(Բ)՝ գրավոր տեղեկացնելով հաստատություն չգնալու պատճառների մասին, ընդ որում տեղեկացված եմ նաև, որ նշված ժամկետում ՍԱՏԳ(Բ) չներկայանալու և ուղեգիրը սահմանված ժամկետում չվերադարձնելու համար հարգելի պատճառներ չներկայացնելու դեպքում հանվելու եմ հաշվառումից:

Քաղաքացու ստորագրությունը _____ /անուն, ազգանուն/

Կտրոնը պահվում է ՍԱՏԳ(Բ) -ում:

Ձև

Հավելված N4

ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարի
2016թ. 20 հունվարի N 8-Ս/1 հրամանի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱԶԱԿՑՈՒԹՅԱՆ _____ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ
ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅՈՒՆ (ԲԱԺԻՆ)

<<__>> _____ 20 __թ. ՈՒՂԵԳԻՐ N__

Քաղաքացի

(անուն, ազգանուն)

Ուղեգրվում է _____

(տնային պայմաններում խնամք տրամադրող կազմակերպության անվանումը)

Քաղաքացու հասցեն _____

Ծննդյան օրը, ամիսը, տարին _____

Սեռը՝ արական/իգական (ընդգծել)

Անձը հաստատող փաստաթուղթ _____

Առդիր՝ _____ թերթ:

Սոցիալական աջակցության տարածքային

գործակալության (բաժնի) պետ՝ _____

(ստորագրություն) (անուն, ազգանուն)

Կ.Տ.

Կտրոնը տարվում է կազմակերպություն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱԶԱԿՑՈՒԹՅԱՆ _____ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ
ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅՈՒՆ (ԲԱԺԻՆ)

<<__>> _____ 20 __թ. ՈՒՂԵԳԻՐ N__

Քաղաքացի

(անուն, ազգանուն)

Ուղեգրվում է _____

(տնային պայմաններում խնամք տրամադրող կազմակերպության անվանումը)

Քաղաքացու հասցեն _____

Ծննդյան օրը, ամիսը, տարին _____

Սեռը՝ արական/իգական (ընդգծել)

Անձը հաստատող փաստաթուղթ _____

Առդիր՝ _____ թերթ:

Սոցիալական աջակցության տարածքային

գործակալության (բաժնի) պետ՝ _____

(ստորագրություն) (անուն, ազգանուն)

Կ.Տ.

Կտրոնը պահվում է ՍԱՏԳ(Բ)-ում

Ձև
Հավելված N5
«Հայաստանի Հանրապետության հարցերի նախարարի
2016թ. 11.11. N 11/1 հրամանի»

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱԶԱԿՑՈՒԹՅԱՆ _____ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ
ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅՈՒՆ (ԲԱԺԻՆ)

<< >> _____ 20 ____ թ. ՈՒՂԵԳԻՐ N _____

Քաղաքացի

(անուն, ազգանուն)

նույնգրվում է _____
(սոցիալական հոգածության ցերեկային կենտրոնի անվանումը)

Քաղաքացու հասցեն _____

Ծննդյան օրը, ամիսը, տարին _____
Սեռը՝ արական/իգական (ընդգծել)

Անձը հաստատող փաստաթուղթ _____
Առդիր՝ _____ թերթ:

Սոցիալական աջակցության տարածքային
գործակալության (բաժնի) պետ՝ _____
(ստորագրություն) (անուն, ազգանուն)

Կ.Տ.

Կտրոնը տարվում է կազմակերպություն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱԶԱԿՑՈՒԹՅԱՆ _____ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ
ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅՈՒՆ (ԲԱԺԻՆ)

<< >> _____ 20 ____ թ. ՈՒՂԵԳԻՐ N _____

Քաղաքացի

(անուն, ազգանուն)

նույնգրվում է _____
(սոցիալական հոգածության ցերեկային կենտրոնի անվանումը)

Քաղաքացու հասցեն _____

Ծննդյան օրը, ամիսը, տարին _____
Սեռը՝ արական/իգական (ընդգծել)

Անձը հաստատող փաստաթուղթ _____
Առդիր՝ _____ թերթ:

Սոցիալական աջակցության տարածքային
գործակալության (բաժնի) պետ՝ _____
(ստորագրություն) (անուն, ազգանուն)

Կ.Տ.

Կտրոնը պահվում է ՍԱՏԳ(Բ)-ում